## ՍՅՈՒԺԵՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԱՐԱՏՈԼՈԳԻԱՅՈՒՄ

Մ. Հ. ՓՈԼԱԴՅԱՆ

Նարատոլոգիան և սեմիոլոգիան (սեմիոտիկան՝ որոշ մասնագետների համար) գիտական նոր բնագավառներ են. և՛ առաջինը, և՛ երկրորդը սկսվում են մոտավորապես 1960-ական թվականներից: Նարատոլոգիան այսօր համարվում է առանձին բնագավառ, սակայն մի շարք սեմիոլոգների համար այն սեմիոլոգիայի մասնաճյուղերից մեկն է:

Պատումային սեմիոլոգիան (semiotique narrotive)[1] այլևս ներկայացնելու կարիք չունի. համաշխարհային համբավ են վաստակել Ումբերտո Էկոյի և Գրեյմասի աշխատությունները: Առաջին տարիների սեմիոտիկան ամբողջովին ձևական տրամաբանության իշխանության տակ էր, իսկ այսօր այն իրագործում է իր սեփական լեզուն: Ամեն մի պատում իր նվազագույն առումով ներկայացնում է, նախ՝ *անցում մի վիճակից մյուսին* (պատումի կանխադրույթ).

*Մշտականը* VS,[2] *Փոփոխականը*
*Նույնը* VS *Տարբերը*
*Անընդհատականը* VS *Ընդհատականը* :

Սյուժեն ծնվում է, տրամաբանորեն, համակարգի (համակարգը՝ որպես հասարակական, տնտեսական և հետևաբար՝ գաղափարական կառուցվածք) ներքին կոնֆլիկտային վիճակի շնորհիվ: Հերոսը (կենտրոնական գործող անձը) և մյուս գործող անձինք տեղ են գտնում վերը բերված աղյուսակի աջ կամ ձախ կողմում՝ պատումի բացման առաջին իսկ տողերից: Սույն դիրքերը չունեն ապրիորի հասկացություն. պատումը կարող է անցնել ձախից աջ, աջից ձախ:

Երկրորդ վտլում առաջ են գալիս հիմնականում երեք տեսակի հակադրումներ՝

ա. կարգային [իրական (կեղծ, լեգալ) ոչ լեգալ],
բ. աստիճանային [կիզիչ (տաք) սառը],
գ. պակասը նշող [կյանք (մահ, շարժվող) անշարժ]:

Պատումը նման է նախադասությանը: «Բայական հանգույցը, - գրում է Լ. Տենիերը, - արտահայտում է մի վոքրիկ դրամա. այն պարունակում է

---

[1] 1981թ. մարտին ՀՀ ԳԱԱ հրատարակչությունը լույս է ընծայել գիրք՝ "Семиотика и проблемы коммуникаций": Մոտավորապես 20 տարի է անցել, և գիրքը համարյա մոռացվել է: Սակայն մի շարք արծարծված հարցեր պահանջում են շարունակություն կամ էլ լուրջ վերաքննում: Այսպիսին է, օրինակ, տրամաբանության վերազանցումը նարասալոգիայի բնագավառում:

[2] VS լատիներեն "versus" բառից՝ «հակառակ»:

գործընթաց, դերեր և պարագաներ»[3]: Տենիերը տալիս է նախադասության ստեման:[4] Կարծում ենք, պատումը կարելի է վերլուծել այնպես, ինչպես կվերլուծեինք մի նախադասություն: Պատմողական նշանագիտության համար (нарративная семиотика) այդպիսի հանգույց է ֆունկցիան (նշված՝ F): Ֆունկցիան անցումն է մի դրությունից մյուսին: Եթե նախադասությունն ունի անդամներ, ապա պատումն ունի ակտանտներ (գործող անձ):

Ակտանտները լինում են տարբեր տեսակի, այսինքն՝ գրաղեցնում են տարբեր դերեր. ա. <u>սուբյեկտը</u> (այստեղ՝ գործող անձ իմաստով) և *հակասուբյեկտը* (նշված՝ S), բ. *օբյեկտը* (սուբյեկտի կատարած գործողության նպատակը, նշված՝ O), գ. *հասցեագրողը* և *հակահասցեագրողը* (օրինակ՝ Աստված և սատանան հեքիաթներում), դ. *հասցեատերը* և *հակահասցեատերը* (ո՞վ է օգտվում գործողությունից, ո՞վ է տուժում վերջնական վտլում):

Այսպիսով՝ ամեն մի միջուկային պատում կարելի է պատկերել հետևյալ ձևով՝ F(S. O.):

Իր հերթին, ֆունկցիան լինում է երկու տեսակի.

ա. կապը (նշված՝ ∩): Օրինակ՝ *Պետրոսը գիրք ունի* նախադասությունը կունենա հետևյալ պատկերը՝ Պետրոսը ∩ գիրք:

բ. Անջատումը (նշված՝ U). *Պետրոսը գիրք չունի* – Պետրոսը U գիրք:

Պատումը կառուցվում է *պատմողական ծրագրի* վրա (programme narrativ), որը կնշենք PN տառերով: Պատմողական ծրագիրը կարող է ստանալ *բացասական* կամ *դրական* լուծում՝

ա. Բացասական. *Պետրոսը կորցրեց գիրքը*՝ PN.= F $\{S_1 \rightarrow (S_2 \cup O)\}$, որտեղ $S_1$-ը սուբյեկտն է՝ գործողության սկզբում, իսկ $S_2$ –ը՝ վերջում:

բ. Դրական՝ *Պետրոսը գտավ գիրքը*՝ PN.= F $\{S_1 \rightarrow (S_2 \cap O)\}$:

Սուբյեկտները կարող են լինել նույն ($S_1=S_2$) կամ տարբեր անձինք ($S_1 \neq S_2$): Առաջինը ($S_1$) գործող սուբյեկտն է, երկրորդը՝ ($S_2$) լինող: Տարբեր սուբյեկտների դեպքում գործողությունը տարանցիկ է (transitiv), օրինակ՝ ընծան ($S_2$-ը տարբեր է) *գողանալ* գործողությունը կարելի է պատկերել երկու ձևով.

1. PN.= F $\{S_1 \rightarrow (S_2 \cap O)\}$ (նույն անձը = գողը)
2. PN.= F $\{S_1 \rightarrow (S_2 \cup O)\}$ (տարբեր անձինք)

Կան, իհարկե, պատումներ, որոնք պարունակում են երկու, երեք պատմողական ծրագրեր: Այդ դեպքում նմանապես կտարբերվեն օբյեկտները (o): «Ալադինի լամպը» հեքիաթում դավաճանը գողանում է Ալադինի լամպը և իսկականի փոխարեն առաջարկում է ուրիշը: Սա կարելի է պատկերել հետևյալ ձևով.

$F_1 \{S_1 \rightarrow (S_2 \cap O_1)\} \leftarrow \rightarrow F_2 \{S_2 \rightarrow (S_1 \cap O_2)\}$

$S_1$ = դավաճանը

$S_2$ = Ալադինի կինը

$O_1$ = նոր լամպը

$O_2$ = իսկական լամպը

---

[3] *L. Tesnière*, Eléments de syntaxe structurale, Paris, 1976, p.102.

[4] Ըստ Տենիերի, սաեման նախադասությունը կազմող բառերի միջև գոյություն ունեցող կառուցվածքային հարաբերությունների և նրանց ստորակարգության պատկերացումն է:

*Պատմողական ծրագիր* հասկացությունը տրամաբանորեն բավականին բարդ է: Հարկ է տարբերել *իրականացված* և ենթադրված պատմողական ծրագրերը: Օրինակ՝ «գտնել» իրականացրած ծրագիրը զուգահեռ է «կորցնել» ենթադրված ծրագրին:

Երկրորդը հիմնող ծրագիր է (de base): Այսպիսով՝ ամեն մի պատմողական ծրագիր կարող է կազմված լինել տասնյակ ենթադրված ծրագրերից (պատմողական ծրագրի բացումը և փակումը արհեստական գործողություններ են).




Պատումը բարդ կառուցվածք ունի. հարկ է, բոլոր դեպքերում այն վերլուծել՝ սկսելով վերջից.




Բարդ են, օրինակ, նաև միատեղված կառուցվածքները. «Ընծա»-ն միատեղում է *հրաժարումը* և *շնորհումը*.

PN (շնորհում) = F $\{S_1 \rightarrow (S_2 \cap O)\}$

PN (հրաժարում) = F $\{S_1 \rightarrow (S_2 \cup O)\}$

«Ընծա» պատմողական ծրագիրն ունի մեկ *գործող անձ*: Երկու գործող անձանց դեպքում պատումը անցնում է *բանավիճային խոսքին* (discours polémique): Այստեղ պետք է նկատի ունենալ *հակասուբյեկտին*.

F $\{S_1 \rightarrow (S_1 \cap O \cup S_2)\}$

F $\{S_2 \rightarrow (S_2 \cap O \cup S_1)\}$

Երկու պատմողական ծրագրերից կիրականացվի միայն մեկը, մյուսը կմնա ենթադրված ծրագրի մեջ: Ամեն մի հերոսի կյանք, օրինակ, ենթադրում է դավաճանի ներկայությունը:

Հետաքրքրիր երևույթ է *ձեռնածությունը* (manipulation).

$F_1 \{S_1 \rightarrow F_2 \{S_2 \rightarrow (S_3 \cap O)\}$

«Կոշիկ պատվիրել» ծրագիրը կարելի է ներկայացնել այսպես՝

$$F_1 \{S_1 \rightarrow F_2 \{S_2 \rightarrow (S_3 \cap O)\}$$

պատվիրողը կոշկակարը պատվիրողը

Ահա սյուժեի մի հակիրճ քննարկում ժամանակակից նարատոլոգիայի վերջին տվյալների հիման վրա: Հիշեցնենք մեր ընթերցողին, որ սույն քննարկումը նշանագիտական է և ամենևին հաշվի չի առնում խոսող-գրող անձի և խոսակցի (ընթերցողի) փոխհարաբերությունները: Իսկ ամբողջական եզրակացության հասնելու համար այսօրվա նարատոլոգը պարտավոր է ուսումնասիրել բոլոր այն բնագավառները, որոնք մասնակցում են սյուժեի ստեղծմանը, հասարակական գիտությունները՝ հոգեբանությունը, փիլիսոփայությունը և այլն: Խոսող անձի (խոսակցի) ներկայությունը հարցը տեղափոխում է սեմիոտիկայից սեմանտիկային: Պատումն այստեղ իրագործվում է երեք փուլով.

ա. Առարկայական, այսինքն՝ իրականության և լեզվային համակարգի փոխհարաբերությունները:

բ. Եղանակավորումը, այսինքն՝ խոսող անձի դիրքորոշումը ասույթի նկատմամբ:

գ. Տեքստավորումը, այսինքն՝ պատմահատվածների կարգավորումը:

Մեր քննարկումը վերաբերում է միայն երրորդ փուլին, որտեղ հաշվի են առնված առաջին երկու վտլերը:

## СЮЖЕТ В СОВРЕМЕННОЙ НАРРАТОЛОГИИ

М. А. ПОЛАДЯН

Резюме

Нарративная семиотика тяготеет сегодня к большей простоте формулировок. Проблема персонажей, к примеру, выделена в отдельную область исследований. А сложнейшие вопросы, связанные с проблематикой сюжета, находят свое окончательное решение благодаря использованию так называемой "нарративной программы".

Здесь учитываются не столько отношения между актантами, сколько между актантами и объектами.